Կարգապահական գործ թիվ 17009

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017թ-ի թիվ հունիսի 27-ի թիվ 102-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/64-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԿՐՈՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ՝ նաև Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Կարեն Մեժլումյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Սիմոն Բաբայանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի, Կարեն Սարդարյանի,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Կրմովել Գրիգորյանի (արտոնագիր՝ թիվ 305) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

22.02.2017թ. Պալատում մուտքագրվել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (**այսուհետ նաև՝ Դատարան կամ Դիմող**) դատավոր Վ. Գրիգորյանի՝ «Դատական սանկցիա կիրառելու մասին» 08.02.2017թ. որոշումը (**այսուհետ նաև՝ Որոշում**), որում նշվել է, որ Դատարանի վարույթում քննվող թիվ ԵԷԴ/0092/01/15 քրեական գործով ամբաստանյալ Ե. Արզիևայի շահերի պաշտպան Կրոմվել Գրիգորյանը, համաձայն չլինելով նախագահող դատավորի դիրքորոշմանը, և դրսևորելով անհնազանդություն, առանց նախագահող դատավորի թույլտվության՝ 08.02.2017թ. ցուցադրաբար լքել է դատական նիստերի դահլիրճը, որով խոչընդոտել է դատական նիստի բնականոն ընթացքը և անհարգալից վերաբերմունք դրսևորել ինչպես Դատարանի, այնպես էլ՝ դատավարության մասնակիցների նկատմամբ: Դատարանը 08.02.2017թ. կայացրել է «Դատական սանկցիա կիրառելու մասին» որոշում, որով որոշել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարույթում քննվող թիվ ԵԷԴ/0092/01/15 քրեական գործով ամբաստանյալ Եվգենիա Վիլիկի Արզիևայի պաշտպան, ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Կրոմվել Գրիգորյանի նկատմամբ կիրառել

դատական սանկցիա և նրան պատասխանատվության ենթարկելու համար դիմել ՀՀ փաստաբանների պալատ:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 09.03.2017 թիվ 41-Ա/ԿԳ-17009 որոշմամբ փաստաբան Կրոմվել Գրիգորյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագրքի)** 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

10.03.2017թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Վիկտորյա Կիրակոսյանին:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել:

Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված է եղել նիստի օրվա, վայրի և ժամի մասին:

<u>3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

18.04.2017թ. Պատասխանողը ներկայացրել գրավոր բացատրություն, որում նշվել է, որ Դատարանի պնդումները, որոնք տեղ են գտել Որոշման մեջ, անհիմն են, Դատարանի հետևություններն իրականությանը չեն համապատասխանում, և նախագահողը Պատասխանողի նկատմամբ դատական սանկցիա կիրառելու որոշում կայացնելու նպատակով խորհրդակցական սենյակ չի հեռացել: Դրանով Դատարանի 08.02.2017թ. «Դատական սակցիա կիրառելու մասին» որոշումը կայացվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (**այսուհետ նաև՝ Օրենսգիրք**) 314.1 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջների ակնհայտ և կոպիտ խախտմամբ, հետևաբար, ըստ Պատասխանողի, իր արարքներում Կանոնագրքի 4.1 կետի խախտում առկա չէ, և այդ հիմքով կարգապահական վարույթը պետք է կարճվի:

Խորհրդի նիստին Պատասխանողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի և ժամի մասին:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

Նախապատրաստողը 10.05.2017թ. կազմել է եզրակացություն, որի համաձայն՝ հաստատված են համարվել հետևյալ փաստերը:

- Փաստաբան Կրոմվել Գրիգորյանը թիվ ԵԷԴ/0092/01/15 քրեական գործով ստանձնել է ամբաստանյալ Ե. Արզիևայի շահերի պաշտպանությունը:

- 08.02.2017թ. դատական նիստի ընթացքում փաստաբան Կրոմվել Գրիգորյանը, համաձայն չլինելով նախագահող դատավորի դիրքորոշմանը, դուրս է եկել դատական նիստերի դահլիճից:

- Դատարանը (նախագահող դատավոր Վ. Գրիգորյան) ԵԷԴ/0092/01/15 քրեական գործով 08.02.2017թ. «Դատական սանկցիա կիրառելու մասին» որոշումը կայացրել է՝ առանց խորհրդակցական սենյակ հեռանալու:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 27.06.2017թ. ժամը 19:30-ին, ՀՀ փաստաբանների Պալատի վարչական շենքում՝ ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակում:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդն ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

- Փաստաբան Կրոմվել Գրիգորյանը թիվ ԵԷԴ/0092/01/15 քրեական գործով հանդիսանում է ամբաստանյալ Ե. Արզիևայի պաշտպանը:

Նշված փաստը հաստատվում է Կրոմվել Գրիգորյանի նկատմամբ դատական սանկցիա կիրառելու մասին Դատարանի 08.02.2017թ. որոշմամբ, Պատասխանող Կրոմվել Գրիգորյանի բացատրությամբ, 08.02.2017թ. դատական նիստի ձայնագրառման կրիչով:

- 08.02.2017թ. դատական նիստի ընթացքում փաստաբան Կրոմվել Գրիգորյանը, համաձայն չլինելով նախագահող դատավորի դիրքորոշմանը, դուրս է եկել դատական նիստերի դահլիճից:

Նշված փաստը հաստատվում է Կրոմվել Գրիգորյանի նկատմամբ դատական սանկցիա կիրառելու մասին Դատարանի 08.02.2017թ. որոշմամբ, 08.02.2017թ. դատական նիստի ձայնագրառման կրիչով:

- Դատարանը (նախագահող դատավոր Վ. Գրիգորյան) ԵԷԴ/0092/01/15 քրեական գործով 08.02.2017թ. «Դատական սանկցիա կիրառելու մասին» որոշումը կայացրել է՝ առանց խորհրդակցական սենյակ հեռանալու:

Նշված փաստը հաստատվում է Կրոմվել Գրիգորյանի նկատմամբ դատական սանկցիա կիրառելու մասին Դատարանի 08.02.2017թ. որոշմամբ, Պատասխանող Կրոմվել Գրիգորյանի բացատրությամբ, 08.02.2017թ. դատական նիստի ձայնագրառման կրիչով:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Կրոմվել Գրիգորյանի նկատմամբ 19 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (15 ավարտված և 4 ընթացիկ վարույթ)՝ չհաշված սույն վարույթը:

Խորհրդի 24.07.2007թ. թիվ 12/1, 29.07.2009թ. թիվ 17/5, 18.02.2010թ. թիվ 4/3, 18.02.2010թ. թիվ 4/2, 25.02.2010թ. թիվ 5/2, 06.10.2011թ. թիվ 22/3, 19.04.2013թ. թիվ 16 ԿԳ/1, 23.11.2012թ. թիվ 22, 05.11.2015թ. թիվ ԿԳ/160-Ա, 30.11.2015թ. թիվ ԿԳ/164-Ա, 02.12.2016թ. թիվ ԿԳ/189-Ա և 17.03.2017թ. թիվ ԿԳ/32-Ա որոշումներով Կրոմվել Գրիգորյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթները կարճվել են:

Խորհրդի 28.07.2011թ. թիվ 15/11 որոշմամբ Կրոմվել Գրիգորյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն այն բանի համար, որ Կրոմվել Գրիգորյանը հանդիսացել է պաշտոնատար անձ, որի իրավասության մեջ էր մտնում տվյալ անձի շահերից բխող որոշման ընդունումը: Տույժը մարվել է:

Խորհրդի 17.01.2012թ. թիվ 3/2 որոշմամբ Կրոմվել Գրիգորյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն 18.02.2006թ. Վարքագծի կանոնագրքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի խախտման համար: Տույժը մարվել է:

Խորհրդի 26.01.2015թ. թիվ ԿԳ/13-Ա որոշմամբ Կրոմվել Գրիգորյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն Կանոնագրքի 4.1 կետի խախտման համար: Որոշումն ուժի մեջ չի մտել, բողոքարկվել է դատական կարգով:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Կրոմվել Գրիգորյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (**այսուհետ նաև՝ Օրենք**) 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Օրենսգրքի 313-րդ հոդվածի համաձայն՝

1. Այն բոլոր հարցերի առթիվ, որոնք լուծվում են դատարանի կողմից դատական քննության ժամանակ, դատարանը որոշումներ է կայացնում:

2. Գործը լրացուցիչ քննության ուղարկելու, կարճելու կամ կասեցնելու, խափանման միջոցը փոխելու կամ վերացնելու, բացարկների, փորձաքննություն նշանակելու մասին որոշումները դատարանը կայացնում է խորհրդակցական սենյակում և դրանք պետք է շարադրված լինեն առանձին փաստաթղթերի ձևով՝ ստորագրված դատարանի ամբողջ կազմի կողմից:

3. Մյուս բոլոր որոշումները դատարանի հայեցողությամբ կարող են կայացվել կամ վերոհիշյալ կարգով, կամ տեղում դատավորների խորհրդակցելուց հետո՝ որոշումը մտցնելով դատական նիստի արձանագրության մեջ:

4. Դատական քննության ժամանակ դատարանի կայացրած որոշումները հրապարակվում են:

ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածի 7-րդ և Օրենսգրքի 314[1] հոդվածի 7-րդ մասերի համաձայն՝ *գործի քննությանը մասնակցող դատախազի և գործի քննությանը որպես կողմի ներկայացուցիչ կամ պաշտպան մասնակցող փաստաբանի նկատմամբ կարող են կիրառվել սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով նախատեսված սանկցիաները: Գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմելն իրականացվում է նույն դատական նիստում կայացվող դատարանի առանձին որոշմամբ: Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված դատական սանկցիան պարտադիր հիմք է դատախազի կամ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար:*

Այսպիսով, Օրենսգրքի 314[1]-րդ հոդվածի 7-րդ մասը փաստաբանի նկատմամբ սանկցիա կիրառելու համար նախատեսում է երեք պահանջ, որոնց միաժամանակյա առկայությունը պարտադիր է, որպեսզի դատական սանկցիան համարվի իրավաչափ առիթ և հիմք Խորհրդի կողմից փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար՝

1. Դատարանը սանկցիա կիրառելու մասին որոշումը պետք է կայացնի նույն դատական նիստում,
2. Դատարանը սանկցիա կիրառելու մասին պետք է կայացնի խորհրդակցական սենյակում և դրանք պետք է շարադրված լինեն առանձին փաստաթղթերի ձևով՝ կոնկրետ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար ՀՀ փաստաբանների պալատ դիմելու մասին որոշում,
3. Դատարանը պետք է դիմի ՀՀ փաստաբանների պալատին՝ իր կողմից կայացրած առանձին որոշումը ՀՀ փաստաբանների պալատին հանձնելու միջոցով:

Ինչպես երևում է դատական նիստի ձայնագրությունից՝ «Դատական սանկցիա կիրառելու մասին» իր 08.02.2017թ. որոշումը Դատարանը կայացրել է՝ առանց խորհրդակցական սենյակ հեռանալու: Ակնհայտ է, որ տվյալ դեպքում Դատարանը, Պատասխանողի նկատմամբ սանկցիա կիրառելու վերաբերյալ հիշյալ որոշումը առանց խորհրդակցական սենյակ հեռանալու կայացնելով, խախտել է Օրենսգրքով նախատեսված՝ համապատասխան որոշում կայացնելու համար սահմանված պահանջները: Այսինքն, տվյալ դեպքում Դատարանը, հիշյալ որոշումը կայացնելով, խախտել է Օրենսգրքով սահմանված համապատասխան որոշում կայացնելու համար սահմանված պահանջները: Հետևաբար, բացակայում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքը՝ դատական սանկցիան՝ նույն դատական նիստում, խորհրդակցական սենյակում կայացվող դատարանի առանձին որոշումը՝ Պալատ դիմելու մասին:

Հարկ է նաև նշել, որ Պալատի խորհուրդը նշված հարցի վերաբերյալ բազմիցս արտահայտել է իր դիրորոշումը՝ «Փաստաբան Հովիկ Արսենյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու մասին» 2007 թվականի հունիսի 7-ի թիվ 9/1-Ա, «Փաստաբան Կրոմվել Գրիգորյանի նկատմամբ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին (ԿԳ-09034)» 2010 թվականի փետրվարի 25-ի թիվ 5/2–Ա, «Փաստաբաններ Լուսինե Գրիգորյանին, Վաղարշակ Գևորգյանին, Անահիտ Ավետիսյանին, Ռուբեն Ռշտունուն և Համլետ Մկրտչյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու

մասին» 2011 թվականի ապրիլի 4-ի թիվ 7/10-Ա, «Փաստաբան Հրանտ Գևորգյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին» 2012 թվականի հուլիսի 23-ի թիվ 8-ԿԳ/1-Ա, «Փաստաբան Գեորգի Մելիքյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին (ԿԳ-16069)» 2016 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 164-Ա, «Փաստաբան Վահագն Մանուկյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին (ԿԳ-15169)» 2016 թվականի փետրվարի 1-ի թիվ 15-Ա որոշումներով և նման իրավիճակներում կարճել է կարգապահական վարույթները, քանի որ բացակայել է դատական սանկցիան՝ նույն դատական նիստում կայացվող դատարանի առանձին որոշումը՝ Պալատ դիմելու մասին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ բացակայում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքը՝ դատական սանկցիան՝ նույն դատական նիստում կայացվող դատարանի առանձին որոշումը՝ Պալատ դիմելու մասին: Վերը նշվածից ելնելով՝ Պալատի խորհուրդը չի անդրադառնում փաստաբան Կրոմվել Գրիգորյանի գործողությունների իրավաչափությանը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8. հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Պալատի նախագահի 09.03.2017 թիվ 41-Ա/ԿԳ-17009 որոշմամբ փաստաբան Կրոմվել Գրիգորյանի (արտոնագիր՝ թիվ 305) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող՝ **Կարեն Մեժլումյան**

27 հունիսի 2017թ.
թիվ ԿԳ/64-Ա
ք. Երևան